# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*15 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 90-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳԱԼԻՆԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ մասով և ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով քաղ.Գալինա Խաչատրյանի դիմումը՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի բնակիչ Գալինա Խաչատրյանի կողմից ինքնակամ կառուցված Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատում գործառնական նշանակության 30,0 քմ մակերեսով տարածքը հացեավորել որպես Վայք համայնք, Վայք քաղաք, Ս.Շահումյան փողոց, 2/3 ավտոտնակ:

2.Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոց, 2/4 հասցեում գտնվող քաղ. Գալինա Խաչատրյանի կողմից կառուցված 30.0 քմ մակերեսով ավտոտնակը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0.00165 հա, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն: ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20232XJYKM:
3.Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա

չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:

5. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 30,0 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00165 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Գալինա Մարտիրոսի Խաչատրյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*15 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 91-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0018 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 65-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 53/61 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0.0018 հա մակերեսով /ծածկագիր՝ 10-003-0024-0158/ հողամասը վերահասցեավորել որպես Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճ. 53/73 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*16 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 92-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.01954 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,01954 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ս. Շահումյան փողոց, 97/10 հողամաս:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*16 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 93-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.14717 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Վայք համայնքի Զառիթափ գյուղում գտնվող 0.14717 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր ճանաչել որպես առանձին միավոր, պետական սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20238GZCGF:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*17 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 94-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ, 44 - ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ՀԱՄԱՐՎՈՂ ՄՀԵՐ ՏԵԼԻԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով և 48-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 06.12.2018 թվականի N1419-Ն որոշմամբ, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» որոշմամբ, հիմք ընդունելով Վայք համայնքի Գոմք բնակավայրի բնակիչ, Արցախյան 44-օրյա պատերազմում անհայտ կորած համարվող Մհեր Ստեփանյանի որդու ՝ Տիգրան Ստեփանյանի բնակարանային պայմանները ուսումնասիրելու նպատակով ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից ս/թ մայիսի 17-ի. թիվ 1 արձանագրությունը՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Գոմք բնակավայրի բնակիչ Տիգրան Մհերի Ստեփանյանին ճանաչել բնակարանի կարիքավոր և վերցնել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

18 ՄԱՅԻՍԻ 2023թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 95-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Վայք համայնքի ավագանու 14 ապրիլի 2023 թվականի թիվ 28-Ա որոշմամբ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված Վայք քաղաքի Ջերմուկի խճ. փ. 5-րդ նրբանցք 2/5 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0002-0229 կադաստրային ծածկագրով , բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, Վայք քաղաքի Ս.Շահումյան փ. 1/11 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0008-0132 կադաստրային ծածկագրով , բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, Վայք քաղաքի Ս.Շահումյան փ. 104/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0026-0032 կադաստրային ծածկագրով , հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, Վայք քաղաքի Վ.Համբարձումյան փ. 6/10 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0004-0388 կադաստրային ծածկագրով , հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, Արտավան բնակավայրի 5-րդ փ. 3/5 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-011-0003-0037 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և Սարավան բնակավայրի Սարալանջ թաղամաս 8 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-039-0103-0014 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը օտարելու նպատակով հայտարարել աճուրդ, աճուրդի օր նշանակել սույն թվականի հունիսի 20-ը:
2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*25 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 96-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՌԱՖԱՅԵԼ ԱՂԱՍԱՆԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2008թ.-ի հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրի բնակիչ, հանգուցյալ՝ Ռաֆայել Աղասանի Առուշանյանի/ծնված՝ 1940թ, մահ՝ 2020թ./ սեփականություն համարվող Վայք համայնք գյուղ Նոր Ազնաբերդ, 1-ին փողոց, տուն 28 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը:
2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001թ.:
3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 0.396 հա հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*26 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 97-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՄԵՐՈՍ ՂԱԶԱՐԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԵՎ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 31.07.2008 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 10.0 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍՈՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Վայքի համայնքապետարանի և Հոմերոս Ղազարի Թադևոսյանի միջև 2008 թվականի հուլիսի 31-ին կնքված՝ Գույքի վարձակալության պայմանագրի 8.2-րդ կետի, հաշվի առնելով վարձակալ Հ.Թադևոսյանի դիմումը (մտից N Թ-8, 25.05.2023 թ.)

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Սույն թվականի մայիսի 26-ից երկկողմանի համաձայնությամբ լուծել Վայքի համայնքապետարանի և քաղաքացի՝ Հոմերոս Ղազարի Թադևոսյանի միջև 2008թ. հուլիսի 31-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքով տրված վարձակալության պայմանագիրը 10.0 քմ հողամասի մասով /վկայական՝ N 2351480/
2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
էլ. Փոստ vayktown@mail.ru

*29 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 98-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 97-րդ հոդվածով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքի Շահումյան 18 հասցեում գտնվող 0.44284 հա մակերեսով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները՝ միաժամանակ սահմանելով դրանց համապատասխան գործառնական նշանակությունները՝

Վայք համայնք,Վայք քաղաք, Շահումյան 18, մակերեսը՝ 0,14458 հա,

Վայք համայնք, Վայք քաղաք, Շահումյան 18/3, մակերեսը՝ 0.29826 հա,

3.Վայք քաղաքի Շահումյան 18/3 հասցեում գտնվող 0.29826 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*29 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 99-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԲԱԳՐԱՏ ՍԻՍԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ մասով և ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով քաղ.Բագրատ Հարությունյանի դիմումը՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի բնակիչ Բագրատ Սիսակի Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատում գործառնական նշանակության 25,20 քմ մակերեսով տարածքը հասցեավորել որպես Վայք համայնք, Վայք քաղաք, Ս.Շահումյան փողոց, 1-ին նրբանցք 8 ավտոտնակ:
2.Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոց, 1-ին նրբանցք 8 հասցեում գտնվող քաղ. Բագրատ Հարությունյանի կողմից կառուցված25.20 քմ մակերեսով ավտոտնակը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0.00296 հա, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն: ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023YRYAGX:
3.Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության

գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 25,20 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00296 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Բագրատ Սիսակի Հարությունյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*30 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 100-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԻՐԱՆ ՍԻՐԵԿԱՆԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ մասով և ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով քաղ. Միրան Սիրեկանի Հունանյանի դիմումը՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի բնակիչ Միրան Սիրեկանի Հունանյանի կողմից ինքնակամ կառուցված Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատում գործառնական նշանակության 27,20 քմ մակերեսով տարածքը հասցեավորել որպես Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճ. փողոց, 11/9 ավտոտնակ:

2.Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. փողոց, 11/9 հասցեում գտնվող քաղ. Միրան Սիրեկանի Հունանյանի կողմից կառուցված 27.20 քմ մակերեսով ավտոտնակը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0.00327 հա, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն: ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023KVQC6E:

3.Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ

քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:

5. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 27,20 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00327 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Միրան Սիրեկանի Հունանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*30 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 101-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՊԵՐՃ ԱՂՎԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ մասով և ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով քաղ. Պերճ Վարդանյանի դիմումը՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Պերճ Աղվանի Վարդանյանի կողմից ինքնակամ կառուցված Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատում գործառնական նշանակության 26,70 քմ մակերեսով տարածքը հասցեավորել որպես Վայք համայնք, Վայք քաղաք, Ս.Շահումյան փողոց, 30/10 ավտոտնակ:

2.Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոց, 30/10 հասցեում գտնվող քաղ. Պերճ Վարդանյանի կողմից կառուցված 26.70 քմ մակերեսով ավտոտնակը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0.00310 հա, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն: ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023RKR2XG:

3.Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ

քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:

5. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 26,70 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00310 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Պերճ Աղվանի Վարդանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*31 ՄԱՅԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 102-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00165 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 65-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոցի 2/3 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,00165 հա մակերեսով /ծածկագիր՝ 10-003-0010-0122/ հողամասը վերահասցեավորել որպես Վայք համայնք, Վայք քաղաք, Ս.Շահումյան փողոց 2/4 ավտոտնակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*05 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 103-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 -Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան 2/4 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող ավտոտնակը 30,0 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00165 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Գալինա Մարտիրոսի Խաչատրյանին ՝ շինության համար՝ 42 660 /30.0 x 1422/ ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 30 982 /16.5x1877.7/ ՀՀ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**